

ՄԱՍԻՍ

Շ Ա Ք Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 44

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

3 ՆՈՅԵՄԲԵՐ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ԼԵՋՈՒՈՎ	ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ
ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ	
(ՈՏԱՆԱԼՈՐ, ՄՈՒԻԷՌԻ)	Թարգմ. ԱԼՓԱՍԼԱՆ
ԿԷՍ-ԲԺՇԿԱԿԱՆ. Ծեծը դպրոցին մեջ	ՏՈՒՔ. Յ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
ՃԵՐՄԱԿՆԵՐՈՎ (ՆՈՐԱՎԵՅ)	Օ. ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՅ
ԱՇԵԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ. «Հարաւի ծայրը»	ՄԴԷԼԼԱ
«ՄԱՏԼԷՆԻ ՄԵՂՔԸ» — ԹԵՐՔՈՆ.	Թարգմ. ՏՕՄԻՆՕ
ՍԻՐԵՐԳ	ՎԱՐԴԳԷՍ
ՅՈՒՇՍԵՏԻ	

Մասիս շաբաթաբերքի շաբեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ ղրԵ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 բուպլի: Թղթասարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պանչե-Դաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաքիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն հոյ:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԵ

در علیہدہ غلطہدہ «مسیس» غرضی ادارہ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաքիս, Նորասունկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884ԻՆ
ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ
ԱՐԴՈՒՋԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալաթա, Վոյվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին աւելն տեսակ շապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ :

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպաներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունել ու հոտարեալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ :

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներով օձիք, թեւնոց, ֆլանէլ, դուլպայ, թաշկինակ, ոսկեզօծ կոճակներ, փողկապ, դրամական, զմեյի «Չէֆիտ», խողանակ, սաւար ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ :

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, ապրանց ազնուութեան, յանձնարարութեանց խնամով պատրաստութեան, ու գիներու աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուններէն մէկն է :

ԳԻՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ

Ա Ր Ի Ս Ե Ի ԸՆԿ

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՐԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՅ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Վաճառանիշ



Արեւստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանորը հասեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ :

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանցից հէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիներու գերազանց աժանութիւնը : Փափաքողներուն՝ քաթալօկը ձրի կը զրկուի :

Մեծաքանակ գնում ընել ուզողները կրնան գիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵԻ Կ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻՔ Վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ գիմել գործակալութեանց որ խոտորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՋ.—ՊՊ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաքոտեօն :

ՊՈՄՊԱՅ.—ՊՊ Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔԱՆԴԵՐԻԱ.—Պ. Մ. Գալֆանան

ԳԱՀԻՐԷ.—Պ. Հ. Ռոզանքալ :

ՌՈՒՍՃՈՒԳ.—Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք :

ՎԱՌՆԱ.—Պ. Կեռոն Արտիքի

ԻՋՄԻՏ.—Պ. Յակոբ Մոմճեան

ՋՄԻՒՆԻԱ.—Պ. Հայրիի Վառնիկ :

ՍԵԼԱՆԻԿ.—Պ. Տիսօ Ֆերնանտեզ :

ԻԻՍԿԻԹ.—Պ. Մ. Բախուան :

ՊԷՅՐՈՒԹ.—Պ. Ֆրանքել Շիֆֆեր :

ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան Եղբարք

ՏՐԱՊԻՋՈՆ.—Պ Արիս Կ. Ինճիճեան :

ՍԵԲԱՍՏԻԱ.—Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան

ՌՈՏՈՒԹ.—Պ. Յակոբ Բաօվատալ

ՄԱՍԻՆ

50^{րդ} ՏԱՐԻ

— 3 ՆՈՅԵՄԲԵՐ 1901 —

ԹԻԻ 44

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ԿԱՆՈՆ ԱՌԱՋԻՆ

Երբ , ամուսնութեան պարկեշտ օրէնքով ,
Կոյս մ'երթայ . . . ապրիլ այր մարդու մը քով ,
Լաւ մը խելամուտ ըլլալ հարկ է որ ,
— Հակառակ տիրոջ բարուց մեղաւոր —
Զինքն առնող մարդը , դատելով յարմար ,
Զինքն առած է կին՝ լո՛կ իրեն համար . . . :

ԿԱՆՈՆ ԵՐԿՐՈՐԴ

Կինն՝ հագուիլ , շքուիլ կը պարտի՝ միայն
Հաշակին , կամփին , քաակին համաձայն
Ամուսնոյն որ իր տէրն է լիազօր .
Իր գեղեցկութեան հոգն՝ ա՛նկ է անոր ,
Փոյք չէ բնաւ քէ կինն՝ այլոց աչքերուն
Զերեւայ հանոյ , գեղեցիկ , սիրուն . . . :

ԿԱՆՈՆ ԵՐՐՈՐԴ

Պչոտ ակնարկներ անպէ՛տ են յաւեւ ,
Ինչպէս շրպարներ , իւրեր հոտաւեւ ,
Եւ բիւր դեղերն որք դեմքին կու տան գոյն .
Անոնք են պատւոյն , մի՛շտ մահաբեր , քոյն .
Գեղեցկանալու խրնամքներն՝ արդէն
Հազուադէ՛պ է որ ամուսինքն տոքեն . . . :

ԿԱՆՈՆ ԶՈՐՐՈՐԴ

Փողոցն , հարկ է որ համեստ ֆոլին տակ
Մարէ աչքերուն նայուածքներն յստակ .
Կինն՝ երկանն հանոյ կ'ըլլայ՝ պայմանաւ
Որ մարդիկ իրեն չը հաւնին բընաւ . . . :

ԿԱՆՈՆ ՀԻՆԴ-ԵՐՐՈՐԴ

Այն անձերէն զաւ՝ տարեց , խոհական ,
Որոնք ամուսնոյն այցելու կուգան ,

Պատեան է որ կինն հիւր բնա՛ւ չընդունի .
Քանզի ծեփծեփող , փնող , լեզուանի
Մարդիկն , որք կընոջ խունկ վառեն առջին ,
Տանսէր պարոնին ջիղերուն դային . . . :

ԿԱՆՈՆ ՎԵՑԵՐՐՈՐԴ

Մարդոց նըւիրած ճոխ շրնձաներէն
Պէտք է զգուշանալ միտս , խոհեմօրէն .
Քանզի , մեր ապրած դարուն մեջ վատար ,
Ոչինչի համար՝ ոչի՛նչ բան չեն տար . . . :

ԿԱՆՈՆ ԵՌԹՆԵՐՐՈՐԴ

Որքա՛ն ալ նեղուի , զկընոջ չէ՛ յարմար
Գործածել բուղթ , գրիչ , մելան , կաղամար .
Վայելուչն ա՛յն է որ բոլորովին
Տան գիրերն երկան գրչով լոկ գըրուին . . . :

ԿԱՆՈՆ ՈՒԹԵՐՐՈՐԴ

Այն քնտանեկան խմբումներն ամեն
Զորս խառն եւ անշահ տարրեր կը կազմեն ,
Կանանց միտքն , հոգին կ'եղծեն անդադար ,
Անոնցմէ խոյս տա՛լն հարկ է եւ արդար ,
Քանզի անոնց մեջ է որ՝ անձնըւեր
Խեղճ երիկներուն դէմ նիւթուին դաւեր . . . :

ԿԱՆՈՆ ԻՆՆԵՐՐՈՐԴ

Պատուաւոր մընալ ուզող ամէ՛ն կին
Խաղալի՛ պէտք է որ խորի ուժգին
Իբրեւ բանէ մը խիստ վրտանգաւոր ,
Քանզի խաւն ախտ մ'է պատրոզ ու մօլոր
Որ կը մըղէ կինն օր մ'ալ , անխափան ,
Վըրայ՝ տալու ինչ որ լիայ տալիք բան . . . :

ԿԱՆՈՆ ՏԱՍՆԵՐՐՈՐԴ

Օրուան խօլ ու խեղ պտոյտներէն ամեն ,
Դատեային սեղան ու կերուխումէն ,
Պէտք է որ խապառ լինն ճըրածարի ,
Քանզի փորձերով ստուգուած է կարի
Թէ կնոջն ի՛նչ որ տան — հաւ , պատիւ , քնծայ —
Փոխարժեքն՝ երի՛կն է որ կը ցնծայ . . . :

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԼԵԶՈՒՈՎ

« Յունաց Պատրիարքարանի Սինոդը որոշեց գրել Աթէնքի Մետրապօլիտին , որ Աւետարանին ժողովրդական լեզուով հրատարակութիւնը արգիլուի » . (Արեւելք , թիւ 4752) :

Պատահաբար աչքիս հանդիպած այս լուրը՝ իր ինքնութեան մէջ՝ բնաւ զարմանք չուր պատճառեց ինծի : Ժողովրդեան գրքին ժողովուրդին զրացումը նոր չէ մեզի համար ալ , քանի որ թունդ հնասիրութեան մը զոռումութիւններուն մէջէն , իմ եւ Բարդէն վարդապետի կողմէն եղած այդօրինակ պզտիկ փորձերու համար կարիստ տեղացին նոյն իսկ Պաշտական թերթերէն տմանք : Անիկա որ սոսկ ժողովուրդին խօսեցաւ , ժողովրդեան լեզուով , եւ չընտրեց բնաւ խօսուածքի ձեւ մը , զորօրինակ հին երայեցեալներ , որ օտար եղած ըլլար զինքը ունկնդրող եւ չընտրատող ժողովուրդին , անշուշտ ամենէն ծանր թշուառանքը կրած պիտի ըլլայ այդ արգելքէն , որ ժողովուրդին կը զանայ իր գրքին գիւրդին հասկացողութիւնը , Գիտունը , հին ու օտար լեզուներու հմուտը երբեք զրկանքի չեն ենթարկուիր այդ զրացումէն , որ ինչպէս Յունաց նոյնպէս եւ մեր Պատրիարքարանի յատուկ են : Զարակամութիւն չկայ բնաւ Պատրիարքարաններու վարմունքին մէջ . առնոց ընթացքը սխալ ըմբռնումի մը , հինցած աւանդականութեան մը ըմբռնումին արգիւնքն է սոսկ : Բայց աս պարագային մէջ չենք կրնար ըմբռնել , թէ ալ ուրեմն որո՞ւ պիտի ուղղուի Աւետարանի շինարար կոչն ու բարոյացուցիչ , փրկարար հրաւերը , քանի որ ժողովուրդի մը ստուար մեծամասնութիւնը կազմող (եկեղեցականներու խառը թիւն ալ միասին հաշուելով) , ռամիկը ազէտ պիտի մնայ այդ ստուածային տողերու իմաստին : Բայց , կաղաչեմ , նոյն իսկ Յիսուսի վարմունքը , եւ անոր վերաբերումը դէպի այդ ռամիկ , ազէտ ժողովուրդը , չը՞ցուցներ , թէ կրօնքը անորն է իր բովանդակ անկեղծութեան եւ իր աշխարհութեան արտաբերումը մէջ :

Եւ ելնել ժողովուրդին կրօնը անհասկնալի ընել իրեն , եւ անոր խօսող հաւատքի լեզուն խժալուր գանգիւնի մը վերածել՝ չը՞նշանակեր միթէ ժողովուրդէն գողնալ կրօնի ըմբռնած միաթարութիւնը , բուն իսկ իր հաւատքը :

Աշխարհի կրօնական պատմութեան նախընթաց շրջաններուն , ստուգիւ , կրօնքին գիրքը կը պահուէր հարիւրիկեղեան տուրիւրու կամ « Սրբութիւն սրբոց » հոջուած անմառչելի խորհրդուն խորը : Սիբիլան իր գաղտնիքներուն չափ գաղտնի տաեղծուածի մը պէս կը թաղէր իր պատգամներուն պապութար , ինչպէս եգիպտական քրմութեան « խորհրդաւոր գիրք » կը նիրհէր Ամմոն-Ռաի տապանակին մէջ : Այդ ésotérique կրօններու գաղտնասացութիւնը՝ գէթ իր այդ ժողովրդախոյզ վարմունքը կը չքմեղէր այն ծէսերով ու փորձութեան հրահանգութիւններով , որոնցմէ անցնող ընծայացուն միայն , մատամբ , կրնար իրաւունք մը ունենալ հպելու այն գիրքերուն , որոնցմէ Աստուած պիտի խօսէր ժողովուրդին , անծանօթ , տաեղծուած այլին , քառասոր լեզուներով : Եւ ռամիկը՝ այն տառն՝ իր անընդմիջական հաւատքին կը միացնէր կրօնի առաջնորդներուն ստեղծած նոր հաւատքը , թէ իր ձեռքերը կրնային պղծել գիրքը , որ իր գաղտնութիւններուն հրապարանքովը միայն կոչուած էր շահագրգռել իր ճակատագրին , իր գործերուն :

Քրիստոնէութիւնը , իր Հիմնադրին քառուած մաքուր բարոյականի հրապարանքին հետ ժողովուրդին զգացուց նաեւ ա՛յն քաղցրութիւնը , որ իրեն կը հրամցուէր գիւրահասկնալի , եւ ամենաւն մառչելի քարոզութիւնով մը , ու գրքերով , որոնք իրեն ու միմիայն իրեն ուղղուած էին : Կմախք վարդապետութիւններով , վերացական կարկաժութիւններով , անծանօթ , խրթնացած , կորսուած լեզուներով չէր , որ բացատրեց իր կոչումը , անըմբռնելի phraseներով չխճուեց

բնաւ իր հոգիին պարզութիւնը : Արեւելքի
աւաթիւր՝ կեանքը կը խտացնէր իր առակնե-
րուն մէջ , ուրիշ ամենէն աննիւթ , ամենէն
երկնատենչ սաւառնումները կը թեւածէին :
Յիսուս ժողովրդեան՝ ժողովուրդին պէս խօ-
սեցաւ եւ անոնց հասկցած դաշտերէն , հայտի
խմորէն , անոնց պարտէզներէն քաղեց իր
քարոզութեան առաջը , զայն իր քմաց ու
հանճարին համաձայն սղոյեղու եւ քանդա-
կելու համար : Եւ այս ամենը ըրաւ որպէս
զի երկնքի Աստուածը ժողովրդեան լեզուով
խօսի ժողովուրդին :

Այն շրջաններուն , յորս հայ գրի գիւտը
տակաւին չէր օժտած մեր եկեղեցական կազ-
մակերպութիւնը գրականութեան անհուն բա-
րիքներով , եւ իր գաղափարները հայեցի բա-
ւերով ու գրով յողաւորելու երանութիւնով ,
հաւատացեալներն իրենք էին որ կը գանդա-
տէին այն խաղաղ ծեփծեփումներէն , որոնք
ծնծղաներու զօղանջին պէս մետաղէ բաւերով
կը քարացնէին վարդապետութիւնները , թողով
որ ժողովուրդին միտքն ու հոգին չի հասկըց-
ուած բաւերու աղաղակին մէջ թափառէին :
Անհնար էր այդ վիճակը շարունակել : Կրօն-
քը՝ ժողովրդական կեանքին անհրաժեշտ
պէտքը , պէ՛տք էր որ հասկցուէր զինքը
պաշտօն ժողովուրդէն , քանի որ չհասկցուած
կրօնք մը չէր կրնար հողոյ փրկութեան
գոնքը բանալ աւաթիլին առջեւ : Մարդկային
միտքը՝ Աստուծոյ լոյսերէն առաջնորդուած ,
Մեսրոպի երազանքին մէջ խտացուց ժող-
վրդական լեզուին արձանագրութեան հրաշա-
ւիքը : Այդ օրը , երկու մեծ ոգիներ , սակի
չողեր կաթեցուցին ժողովրդեան հաւատքին
չուրջ , իրենց ձեռնարկած ու աւարտած
թարգմանութիւններով , եւ հայ գրի գիւտը
ժողովուրդին առաւ ի՛ր լեզուն , ի՛ր հաւատ-
քը , ի՛ր գիրքը միանգամայն :

Եւ եթէ Սահակ ու Մեսրոպ արդի մերե-
րուն ապուշ խղճահարութիւնն ունենային ,
իրենց հրիտակուած հինին հանդէպ , ի՞նչ ,
միթէ կը կարծէի՞ք : Թէ անոնք անմահացած
ըլլային իրենց գործերուն մէջ : Հնութեան
խժուրթիւնը չէր որ իրենց աչքերը կը խաղէր .
բնաւ , այլ կրօնքը ժողովուրդէն հասկցուած
ըլլալու միտքարութիւնը : Հիմակ , ուրեմն ,

ինչո՞ւ չշարունակուի Սահակ-Մեսրոպի ըմբռ-
նումը , քանի որ մեր հին լեզուն , այսօր աւա-
կին կամ քսենք մեր ժողովուրդին ստուար մե-
ծամասնութեան համար տարբերութիւն չունի
բնաւ , հին յունական լեզուի ծեփութենէն
կամ ասորականին խժուրթենէն : Ինչո՞ւ հիմայ
նոյն այդ ժողովուրդին զլացուի իր հասկցած
լեզուով կարդալ Ս. Գիրքը , երբ հին լեզուն
վանկերը կը զօղանջեն զուր՝ եկեղեցոյ պա-
տերէն ներս , ուրիշ ժողովուրդը կը մեկնի
առանց գիտակից հաւատք մը կամ հասկըց-
ուած միտքարութիւն մը իր հետ տանելու Ս.
Գրոց վեհութենէն : « Թէոր դուն հոգիով
օրհնութիւն րնես , անիկա որ ագէտի տեղ
կայներ է , ինտո՞ր ԱՄՆՆ պիտի ըսէ քու գո-
հութիւն տալու ատենդ , ինչու որ ան քու
զրուցացդ չիմանար : . . . Կուգեմ հինգ խօսք
մտառութեամբ խօսիլ , որ ուրիշներուն ալ
սովբեցնեմ , քան թէ ըրբաւոր խօսքեր օտար
լեզուով » (Ա. Կորնթ. ԺԴ 16-19) :

Բացարձակ սխալում մը կայ Պատրիար-
քարաններու այդ անհարկի պահանջումին
մէջ , ըստ որում կ'արգիլեն եկեղեցիին մէջ
Ս. Գրոց տալու ժողովուրդին լեզուն , կամ
ժողովուրդին տալու իր հասկցած լեզուով Ս.
Գիրք մը : Մարդկային մօլեւանդ սին հնա-
պաշտութիւնը կը պահանջէ յանուն եկեղեց-
ւոյ , որ գոհ մնանք անմահ գիրքը պահել
արծաթ պատանքներու կամ ոսկեթել լաթե-
րու մէջ , որպէս զի անիկա , անհպելիւն ,
անկոխելիւն մնայ Ամին-Ռաի խորհրդաւոր
գրքին կամ Սիրիլեան պատգամներուն պէս :
Բայց տեղի լաւ չպիտի՞ ըլլար , կը կարծէք ,
եթէ ժողովուրդին սիրտը արծաթ , եւ հոգին
ոսկի ըլլար , իբր խորան ծառայելու Աստ-
ուածաշունչին , ուրիշ կեանքը կ'երանգաւորի
եւ կը ժպտի , եւ ուրիշ մարդ իր ծարաւի տեն-
ջանքներուն միտքարութիւնները պիտի ծծէր :

Յիսուսի ձայնն ալ միեւնոյն պահանջի ու-
տեթիւնով կը կոչուի շարունակ ու աշխարհ
ժողովուրդին ձայնով կը պահանջէ , որպէս
զի Աւետարանը ժողովրդական կեանքերու
մէջ լուծուի մանաւանդ , քան թէ իր ծած-
կոյթներու մետաղին մէջ քարանայ :

Աւետարանը՝ առանց ժողովուրդէն հառ-
կըցուելու , չի կրնար ըլլալ , ոչ քրիստոն-

եային հաւատքի կանոնը, եւ ոչ այն Ս. Գիրքը, որուն պիտի ուզուէր մեր հոգիին բովանդակ սեւեռամտածումը: Երբ յարգենք ժողովուրդին այս փափագը, երբ եկեղեցիին Ս. Գիրքը, ժողովուրդին ալ Ս. Գիրքը ընենք, վստահարար ժողովուրդը պիտի ունենայ աւելի գիտակից հաւատք մը, եւ նոյն իսկ խափանած պիտի ըլլանք կրօնական հերձուածները:

Եւ միեւնոյն ատեն չարունակած պիտի չըլլանք Սահակ-Մեսրոպի գործը:

ՄՈՒՇԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՃԵՐՄԱԿՆԵՐՈՎ (ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Պուրսայի մեր լաւագոյն յաճախորդներէն մէկն էր ան: Տասը տարիէն աւելի էր որ գործ կ'ընէինք հետը, եւ ամէնէն աւելի իրմէն գոհ էինք: Էն շատ գործ ընողը եւ օրը օրին դրամ վճարողն էր Լէօնիտա Խրիսթօ:

Չոր, երկայն ու նեղ մարմինով, դեղնած ու մշուտ մորթով՝ մտրակի պէս մարդ մըն էր Ուն ու խոշոր, խորշոմ ճակատի մը շուրջը վրտացող երկայն թիւերով, լայն գանգուրներ, աւելի կը խոշորցնէին իր գլուխը՝ որուն վրայ պզտիկ դէմք մը, կացուած պիտիք ու նեղ նայուածք մը, վատաւորով տպաւորութիւն մը կ'ընէին մեր վրայ:

Չոր, պզտիկ հազ մը, անբաժան իրմէն, որուն համար, «հարբուխէ մը ծնած պզտիկ եզրայրոս» կ'ըսէր, եւ մեր փոշոտ վաճառատուներն մէջ, ամէն մէկ ծրար թօթուելուն, թաշկինակի ունգունքին տանելով իր «կ'աղաչեմ» բօխչը ապապրեց որ փոշի չկլլեմ»ը, ոչ իրեն եւ ոչ ալ մեզի պատճառ կ'ըլլար որ, տարուէինք խորհելու թէ, կրնար հիւժախտ ունեցած ըլլալ, խեղճը:

Իր ամէն մէկ, չորս ամիսը անգամ մը, ապրանք առնելու համար Պոլիս գալուն, երբ իր որպիսութիւնը հարցնէինք քիչ մը

պայմանադրապէս, քիչ մըն ալ իր հիւանդութիւնովը հետաքրքրուելուն, «Աւելի աւելի, շատ աւելի աղէկ» կը կրկնէր մեզի, եւ մենք ալ կը հաւտայինք կամ կ'ուզէինք հաւտալ, հակառակ իր մնայուն չոր հազին թեթեւ վանդիւնին եւ հակառակ հետզհետէ աւելի նիհարող, ստուեր դարձած իր մարմինին:

Ընդարձակ ծրագրերն էր չինէր, ապագային վրայ: Իր մէկ հատիկ տղուն վրայ կը խօսէր մեզի անձկանքով, իր ունեցածը պիտի բաւէր իրեն, եթէ ուզէր գործէ քաշուիլ, ու հանգչիլ, որուն ա՛յնքան պէտք ունէր:

Թերեւս, դեռ չա՛տ երկար կարենամ ապրիլ, ինչպէս կը պնդէ բժիշկս, կ'ըսէր, տեսակ մը արտամութիւն դնելով այդ քերեւսին մէջ, որ բնաւի մը նշանակութիւնը կ'առնէր մեր աչքին: Բայց մինչեւ որ մանչս չի հասնի, դպրոցէն չելլայ ու գործիս չի վարժուի, չեմ կրնար քաշուիլ գործէս: Տղուս ապագան է ան: Անոր բարօրութիւնը, եւ պէտք է գիտնալ որ տղէս զատ ոչինչ ունիմ աշխարհքիս երեսը: Գալ անգամ վախճանին, մէկտեղ պիտի բերեմ որ Սթամպօլը տեսնայ: Տեսնա՞ք ի՞նչ առոյգ ու կտրիճ տղայ է: Ինձի պէս հիւանդոտ չէ՛ ան...

Գիտէինք որ կնիկը ողջ էր, եւ «հիւանայի» կ'ըսէին: Բայց անոր խօսքը չէր ընել: «Տղէն զատ ուրիշ բա՛ն չունէր»: Հապա կնիկը: Ադ զանցառումը առանց պատճառի չէր անշուշտ:

Արձակուրդին ոչ ինք եկաւ, ոչ տղան: Խնամութիւն աշխերտը միայն եկաւ, մէկ քանի պակաս տեսակներ գնելու համար, սըկէ նրկէ:

Անկողին էր ինկեր: Եթէ ելէր, մօտ օրէն կը յուսար գալ: Անանկ — ըսաւ աշկերտը — բարեւ էր ըրեր:

Վեց ամիս ետքը գործով Պուրսա զրկուեցայ: Հոն իմացայ որ Լէօնիտայի վրձակը ծանր էր եւ անյոյս: Հոն երթալուն մէկ պատճառն ալ ադ էր արդէն: Ստուար առնելիք մը ունէինք եւ պէտք էր դեռ չմեռած՝ բանի մը կապել:

Տղան դպրոցն էր դեռ: Խնամութիւն նոյն աշխերտը, որ սիրով ու լացով ընդունեց զիս

եւ վիճակներն պարզեց : Լէօնիտաին տեղը , գործին զըւոյր անցեր էին հիւսա , առանց իր կամքին ու նոյն իսկ գիտութեանը , իր աները ու աներորդին :

— Կը ծախեն ու փարան կը քաշեն կոր , ըսաւ , առանց հաշիւ տալու : Չեմ կարծեր որ կարող ըլլաք բան մը առնելու : Արդէն խանութին մէջը շատ բան չէ մնացած որ : Վաճառականին փարան տալու միտք չունին :

Երբ անգամ մը , հիւանդը փափագ յայտներ էր որ իր գործը շարունակեն իր աղուն համար , իր եղբորը ձեռքով՝ որ գործէն կը հասկնար , եւ վաճառական—առնելիքերուն հետ համաձայնութեան մը գալով , կամաց կամաց պարտքերը վճարուին , որպէս զի , ինք ալ հանգիստ սիրտով մեռնի :

— Դուն , մեռնելոյց հիւանդ , կնիկդ ալ մոխիրի վրայ նստեցնել կ'ուզես կոր : Ի՞նչ ունիս որ , ինչդ տանք վաճառականին , էին պատասխաներ :

Եւ հետզհետէ ծախսեր ու գանձեր էին :

Կնիկը չբեղ կազմով ու չքնաղ աղւորութեան մը տէր էր : Լէօնիտա անոր կը պարտէր , թերեւս , իր հիւանդութեան զայրագնումը : Անիկա , առաջուց արդէն խօսուած աղջիկ , կարգուէն ետքն ալ , — որուն շնորհիւ մէկէ աւելի դժուարին կացութիւններէ փրկուեր էին , ինքը ու իր ընտանիքը , — շատ հանգարտ կենալ չէր կրցեր :

Էրիկը , մէկ կողմէն իր սէրէն մարտկուած , միւս կողմէն նախանձի ու յուզումի՝ բուռն ու դառն տագնապներու մէջ լռկուած , հատեր լմացեր էր :

Նախկին զրկուած աղջկան լուրջագոյ տենչոտ ու անհամբեր թափովը , հիմա էն պահանջոտ ու քմահաճ կինը դարձեր էր աշխարհիս : Ու էրիկը , իր սէրին տկարութեանը մէջ աչք էր գոցեր անոր էն արտառոց քմահաճոյքներուն իսկ , բայց նորէն չէր եղեր , քանի որ կուրս անպակաս էր մէջերին :

Բ.

Առնելիքնիս անկարելի եղաւ գանձել իր աներոջմէն : Ուզեցի իրեն երթալ՝ գործին խնդիրները հասկնալու ու խօսքս հասկնելու համար : Ծաղիկներն զիս տունէն : Ոչ մէկը կը ձգէին որ իր քովը երթայ :

Օր մը , իր խանութին աշկերաք , — որուն հետ աղէկ մը թարեկամացեր էինք ա՛լ , — վաճառուելու վտանգը աչքը առնելով , տունեցիներուն դուրս ելած տոներ , միջոց մը գտաւ եւ քովը հանեց զիս : Հազիւ ճանչցայ : Հազիւ ճանչցաւ ինձի : Ամենէն վերի յարկը , տանիքին տակը , տաքին ու ցուրտին ենթակայ : Ամիսներէ ի վեր չի փոխուած անկողին մը սրուն մէջ , կըտրուած , գամուած էր Լէօնիտա , ուրուականացած , սլիտի ըսկի , այնքան թափանցիկ էր գոյնը ու այնքան խորունկ ծակուած էին աչքերը :

Գլուխը մինակ կ'երևար , խուռացած , խառնուխուռն փակչոտած մազերով , ազտուած վերմակէն դուրս ինկած , կոնակի վրայ , բարակ կոթին հազիւ կ'պած , բարձին ճիւղ մէջտեղը խորունկ գամուած եւ վայրկեանէ վայրկեան հառաչով մը ցնցուելով :

— Մեռնիմ' լմնայ , ըսաւ ինձի , դառնօրէն լալով :

Պառկած օրէն ի վեր կնիկը ու զաւակը տեսած չէր : Մարդու երես տեսած չէր : Ծնորհակալ եղաւ երթալու : Բայց գործի վրայ խօսիլ կարելի չեղաւ :

— Պատիւս ալ փարայի մը եղաւ վաճառականներուն քովը , ըսաւ մինակ , աչքերը գոցելով :

Տունէն , ազգականներէն ոչ մէկը կուգար զինքը տեսնելու , պլշկելու վախէն բուրդուած : Եղբորն ալ , որ մէկ խօսքի մը կը նայէր գալու համար , եւ սրուն հետ քիչ մը նեղացած էր նախապէս , կնկանը պատճառով , լուր իրկեր էին որ զինքը տեսնել չէ՛ր ուզէր կոր :

Բժիշկ բնաւ բերած չունէին : Ի՞նչ հարկ արդէն : Ոտքի եղած տոներ , այն ինչչա՛փ բժիշկի էր ցցուցեր ինքզինքը : Ի՞նչ օգուտ էր եղեր որ : Պոլիս , էն նշանաւորները նայել էին , ինչ էր բրեր : Վճուռած բան էր : Ինչո՞ւ զուր տեղը փարա խարճէին : Վաղը մէկալ օր , եթէ մեռնելու ըլլար , կնիկը , տղան ապրուստ կ'ուզէին :

Անկողինին սնարին կողմը , փայտէ հաստ բիր մը կը սպասէր , զոր դժուարով կը վերցնէր ու գետնին կը զարնէր , սպասուէին կանչելու համար , որ նազով կուգար վեր , հաց ու ջուր բերելու համար :

Շուտով փախայ հոնկէց : Տունեցիներն ալ վրայ գային թերեւս :

Յաջորդ օրը , կնկանը գացի , երկու խօսք զուրցելու համար : Բայց չի կրցայ : Ուրախ էր եւ զուարթ : Կատակներ կ'ընէր , մինչեւ անգամ , իր նախկին ընկերուհիներուն , որոնք իր հիւրերը կ'ըլլային հիմակ յաճախ , իր ազգականներուն , մինչեւ իր սպասուհիին հետ :

Շատեր առեր էին իր շուրջը : Ըսի որ աղուոր էր եւ չա՛տ : Փարա ալ պիտի ունենար : Ծանօթ երիտասարդներ կը թռթռային իր քովերը , տունին մէջ կամ դուռն ելած տոներ , — որովհետեւ դուռն կ'ըլլար եւ յաճախ , — որոնց նայուածքին մէջը , դժուար չէր թեկնածուի հովեր տարրաղաղերը , եւ որոնցմէ ինք ալ չախորժելու երեւոյթը չուէր բնաւ : Մինչեւ անգամ շատեր կը պնդէին գիտնալ թէ , որո՞ւն համար նախասիրութիւն մը կը սնուցանէր ան , իր մէջը :

Անոնց հետ իր անտարբեր ու վժռոտ խօսուողութեանը ու չնպոյզ քահնանքներուն տոներ , սրանեղիչ էր տեսնել զինքը , ամէն անգամ որ վերէն ընկնէր , քիչ մը աւելի ուժով ու քիչ մը աւելի երկար զարնուելով գար , կատարած ու կարմրած պուշուրով :

— Համբերել չի՞յտես , մա՛րդ : Իմին ալ համբերութիւնս հասցուցիր ա՛լ : Ինձի՛ ալ հիւանդ պիտի ընես : Ի՞նչ է միտքդ . . . Ձհանէիր , չկատարէիր տէ ինձի չառնէիր :

Եւ ջղայնութենէ բռնուած տագնապոտի մը պէս , իր քովի տղաքներուն՝ շուտով զփախուցիչներ վազցնելով , իր թունդ ելած ջիւղերը հանդարտեցնելու պէտք կ'ունենար :

Քանի անգամներ , խօսքի մէջ , կատակի ձեւով , կրկներ էր , աղւոր կնկան միշտ ներուած , մեղքոտ յանդգնութիւնով մը .

— Իրաւ որ չարաթ մը որբւտարի չեմ կրնար մնալ : Խնք չեմ սեպեր :

Էրկանը հիւանդութիւնը քանի երկննար , այնչափ աւելի սաստիկ ուս մը՝ անոր դէմ , ու այնչափ աւելի մեծ անհամբերութիւն մը դէպի անոր վերջը , կը պոսթկար իր ներսը :

Օր մը բարկութենէն գրգռուած մէկ վայրկեանին .

— Մարդ Աստուծո՛յ , ո՛չ դուն ազատեցար , ո՛չ մենք , պօռաց : Մեղք պիտի ընես կէնճութեանս . . .

Ուրիշ օր մըն ալ , նորէն նեղսիրտ մէկ պահուն .

— Ահաքո՛ւն օշոտն , կը բացագանչէր , մեռնելէդ ետքը սեւ չհագնիմ . . . : Սուգդ չի տեսնամ . . . :

Գ.

Պոլիս վերադառնալէս ամիսներ ետքը , նորէն Պուրսա երթալս պէտք ըլլալով , առանկ հանդիպեցաւ որ հասած գիշերս մեռեր էր Լէօնիտա եւ յաջորդ օրը յուզարկաւորութիւնը պիտի կատարուէր :

Պէտք եղաւ որ վաճառատունիս կողմէն , մեռելին ես երթամ : Անձայն , անձուն վերցուցին , պանդուխտի մը պէս : Ոչ ազգականներ կային , ոչ կեղծ-լացողներ գտնէ իր վրան , ի՞նչ կ'ըլլար : Տղան գիշերօթիկ դըպրոցին մէջ բանէ մը տեղեկութիւն չունէր : Տունը վերէն վար գոց էր , պատուհաններով , վարագոյրներով : Ոչ ոք կ'ընդունուէր : Պարպուած խանութին ալ առջի օրը գոցեր էին :

* * *

Կատակը իրաւ եղեր էր : Նոյն օրը իմացանք որ կնիկը , յաջորդ կիրակին պիտի կարգուի եղեր : Ձուգեցինք հաւտալ : Բայց «պատրաստութիւնները կը տեսնուին կոր» կ'ըսէին : Ամենուն բերանն էր : Վերջապէս ամէն բան կարելի էր սպասել այդ կարգի մարդոցմէ : Խեղճ բարեկամիս մեռնելէն ետքը , ալ չէի հետաքրքրուեր անոնցմով : Ուզածնին կրնային ընել , իմ ի՞նչ փոյթս :

Յաջորդ կիրակին . . .

Romanesque, romantique , ի՞նչ կ'ուզէք ըսէք , բայց աչքովս տեսայ : Ձուգադիպութիւն մը զոր կարելի չէ միտքի մէջ տեղ մը սղմեցնել : Դիպուած մը տարօրինակ , որուն վրայ խորհելու , դեռ մինչեւ հիմա վրաս կը փուշտար :

. . . Յաջորդ կիրակին , ճերմակ դագաղ մը դուռն կը հանէին Լէօնիտայի տունէն : Հոյակապ իրան մը ու շքեղ կուրծքի մը ցայտուէրը , դժուարօքէն պարփակուած , ճերմակ անդուսէ շրջազգեստին մէջ , ճաղէն

դուրս կը վիժէին : Կէս փակ տաշուքները , աղէկ մը վեր առնել կարելի չեղած յորդ մազերը , ձերմակ բարձին վրայ թափթիւած , ամբողջ երեւոյթով այնչափ կենդանի , այնչափ առոյգ ու այնչափ սուտ կերպով մեռած որ , կեանքէն բռնի խլուածի դառն տպաւորութիւնը կ'ընէր վրագ , որչափ հատած , փտտած , ինքնիրենը փրթածի տպաւորութիւնը բրեր էր , առջի շարթուն , հէգ Լէօնիտային բաց դիակին տեսքը :

Նոյնչափ անշուք թաղում մըն ալ այս եղաւ : Տղան միշտ դպրոցը կը մնար , ամէն բանէ անգիտակ : Իր շուրջը բզզացող երիտասարդները փախեր էին քովէն : Բազմիքէն դարձին , — ուր շուտով գացեր էր , սուգէն մերկանալու համար , ժողովրդական հին սովորութեան մը բերումով , — պատկեր էր , ալ չեղելու համար : Ոչ իսկ ուղեցի գիտնալ թէ ի՞նչ եղած էր իր հիւանդութիւնը : Այնքան դժնդակ էր տպաւորութիւնն որ , կուզէի որ առանց պատճառի , առանց հիւանդութեան , առեղծուած օրէն մեռած ըլլար ան , որպէս գիկարող ըլլայի Նախարարութեան վերագրել խելայեղող այդ զուգադիպութիւնը :

Բայց կար բան մը : որուն չկրցայ ուշադրութիւն չընել : Ձերմակներ պիտի հագնէր էրկանը մեռնելէն ետքը , — անանկ էր ըսեր , — թերեւս նորէն հարս ըլլալու հեռապատկերը ունենալով իր խորհուրդները ետին : Իրաւ ալ , թէեւ չհագաւ , բայց հագցուցին :

Իր խօսքը եղաւ : Բնաւ սուգ չի տեսաւ : Ձերմակներով ալ հողը դրին գինքը :

Օ. ԶԻՏԹԷ-ՍԱՐԱՏ

ՏՈՒՔԹ. ԳՐԻԳՈՐ ՃԵԼԱԼ , Գալսիկի *հփայտ* եւ *հեղեղ* Բարիգի հիւանդանոցներուն , եւ օգնութեամբ պատուած Assistance Publiqueի կողմէ : 14 տարի Բարիգ անցունելէ ետք , որուն 6 տարին իբրեւ բժիշկ , մարաֆաղափա հաստատուած է : ՏՈՒՔԹ. Գ. ՃԵԼԱԼ կը դարձանէ , բացի ընդհանուր հիւանդութիւններէ , մասնաւորապէս *ցղային* եւ *մորթային* հիւանդութիւններ : Ամէն օր , չորեքշաբթի գաւ , կես օրէ վերջ հիւանդ կընդունի իր տունը՝ Բեքա , Սագրգ Աղան , ք. 39 : Երկուշաբթի , չորեքշաբթի եւ ուրբաթ առաւօտները՝ Սամաթիա , Բիխեան դեղաւաններ կից տունը :

8—30

ԿԷՍ-ԲԺԿԱԿԱՆ

ՇԵՏՐ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՋ

Այս բաւական ծեծուած խնդրին վրայ խօսելուս կ'արդարանամ՝ քանի որ դեռ վերջերս մեր օրաթերթերէն մէկուն , — Արեւելի մէջ , — «Կոտրած Մատը» յօդուածի մը նիւթ մատակարարած էր համակրելի գրողի մը , եւ դարձեալ նոյն նիւթին՝ դպրոցական պատիժին՝ խմբագրական մը նուիրած էր բժշկական շարաթաթերթ մը :

Ասկէ քսան տարի առաջ , կամ աւելի կանուխները , ծեծը իր զանազան ձեւերովը սովորական ու գլխաւոր պատիժն էր մեր՝ դպրոցներուն մէջ , Հիմակ ալ ատոր ճիշդ հաւանակ ծայրայեղութիւն մը կը քարոզուի ու կ'ստի թէ ծեծը բոլորովին վերացելու է դպրոցներէն :

Արդարեւ տեսականին մէջ , թուղթի վրայ աղուոր բան մըն է այս . այսինքն աղէկ յանձնարարութիւն մը կամ փափագ մը , եթէ սակայն ծառայէ նպատակին : Ծեծը կամ դաւազանը , կը կարծեմ թէ երբեք վերցուելու չեն դպրոցներէն , ու մանաւանդ մեր դպրոցներէն . հոգս չէ թէ այս համըզում մանկավարժական կամ կրթական ջրջանակներու մէջ յետամնացի տեսութիւն մը նկատուի :

Ամէն մարդ , որ քիչ չատ փորձառութիւն ունի դպրոցական կեանքին՝ պիտի ընդունի թէ աննպատակ ու անխոհմ պատիժը — ըլլայ այն ծեծ կամ ուրիշ ո՛ր եւ է բան — բնաւ չարաազդեր ակնկալուած արդիւնքը : Գաւազանի անխորհուրդ եւ անընդհատ գործածութիւնը , կրթական յարկերուն տակ՝ ջատագովել մարդու միտքէ չանցնիր մեր օրերուն : Կ'սեմ սակայն թէ դաւազանը պահուելու է դպրոցին մէջ . պահուելու սակայն եւ ոչ անդադար գործածուելու :

Քանզի աշակերտներ կան — ու ատոնք շատ աննշան թիւ մը չեն ներկայացներ — որոնց մտքին հասնելու , որոնց խղճին ազդելու ճամբան իրենց շջափումի զգայարանքին՝ մարթին վրայ է : Ու հո՛տ ազդելու են , հո՛տ

ներգործելու են գործածուելիք միջոցները՝ ծեծի ձեւին տակ : Փայտը կամ գաւազանը սակայն չենք քաջալերեր անխտիր մարմինին ամէն մասին վրայ գործածել, թէեւ քիչ մը մարդակազմութիւն ու նոյն իսկ քիչ մը փորձառութիւն (անձնականը միշտ նախընտրելի համարելով) բաւական պիտի ըլլայ այդ մասին ուղղութիւն մը տալու՝ փայտը գործածող դաստիարակին :

Իրրեւ ընդհանուր կանոն՝ ծեծի չափողոյն տեղը՝ մարմինին վրայ՝ կոնակի վարի մասն է, որ բնախօսական կարգ մը առաւելութիւններ ունի : Հոն կակուղ մասը թանձր է, ոսկորը չափ խորունկ է ու հարուածին ազդեցութիւնը չի՛ կրնար չարիք մը հասցնել ոսկորին, ինչ որ մարմնական պատիժներու մէջ նկատելի կէտ մըն է : Ինչպէս արդարացի գանգատով կը շեշտէր «Կոտորած մատը»-ին օրինակը :

Կոնակի այդ թաւ մասը մանաւանդ լեցուն է բազմաթիւ ջիզերով, ուստի հոն ցաւի զգացողութիւնը մարմինն ո՛ր եւ է տեղէն աւելի շեշտուած կ'ըլլայ գաւազանի տրամաբանութեանը տակ : Եւ եթէ պատահի որ երբեմն այս պատիժը ծարայեղութեամբ գործադրուի աշակերտին վրայ՝ տակաւին կրուհակի այդ մասը ուրիշ անդերէ՛ նուազ մընաւուելու ենթակայ է՝ կազմախօսօրէն :

Հիւանդութեան մը համար ընդունուած դեղ մը կամ դարման մը չարաչար գործածելով՝ օգուտի տեղ մընաւուելու առաջ կու գայ . բայց յանցանքը դեղին չենք տար, գանգատը դարմանին դէմ չենք ուղղեր, հապա վանոնք ոգիտալար, անձարակօրէն գործածողին նոյնը նաեւ ճշմարիտ չէ՞ արդեօք դպրոցական անառակութիւններու համար գործածուած դարմանին՝ ծեծի մասին :

ՅՈՒՐ. ՅՈՒՐ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՏՈԹՔ. Վ. Մ. Թ. ՀԻՆՊԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Բերս, Սիթէ Տ'Ալեք, արարք. Նօ. 3

Ամէն օր կէս օրէ վերջ, Վիրաբուժական եւ Արուեստական ամէն տեսակ աշխատութիւններ՝ ամենավերջին նրբութեանց պահանջմանց համաձայն :

Գշ. Եշ. եւ Շք. ստաւօտները ԶԱՐԻՖԵԱՆ Դեղարան ի Դուռ-Գարու :



Դեռ, չը սիրած քեզ սիրով մ'անսահման, Սիրտս անմատոյց բոյն մ'եր յսուրը տենջերու, Հոգիս՝ ծարաւի սիրոյ բզգացման, Դեռ, չը սիրած քեզ սիրով մ'անսահման, Հոգույս երկինքէն՝ ամպի մը նրման, Սերը խոյս կու տար միշտ ինձմէ հեռու, Դեռ, չը սիրած քեզ սիրով մ'անսահման Սիրտս անմատոյց բոյն մ'եր սուրը տենջերու :

Դեռ, չը տեսած քու դեմքըդ պաշտելի, Ուր իբր աղամանդ աջկուկքդ շողան, Կեանքը տաղտուկ մ'եր քիւր վիշտերով լի, Դեռ, չը տեսած քու դեմքըդ՝ պաշտելի, Դեմքդ՝ ուր սիրավառ, նայուածքս հալի, Ուր ճերմակ ճահանջք անուղ կը խաղան, Դեռ, չը տեսած քու դեմքըդ պաշտելի Կեանքը տաղտուկ մ'եր յոյսերով ունայն :

Դեռ, չը լրսած ձայնդ անուշ, հեշտալուր, Զուբակին աղու շեշտերն ինձ համար, Լացող երգ՝ մ'եին, ձանձրոյթի աղբիւր, Դեռ, չի լրսած ձայնդ անուշ հեշտալուր, Զայնդ՝ հեշտանջիւն, անհուն մի գիք մ'ուր Անուղ կը քրքուան քառեր սիրավառ, Դեռ, չի լրսած ձայնդ անուշ՝ հեշտալուր, Զուբակն՝ արտասուաց գետ մ'եր ինձ համար :

ՎԱՐԴԵՄ

ԱՇԽԱՐՀԻ ԾՐՋԱՆԸ

ՇՐՋԻԿԻ ՆՕԹԵՐ

(Գ.)

Բարեկուտայ Գլուխ

Հետզհետէ այն աստիճան սրտակից մտերիմներ կը դառնանք Բախպի հետ որ, իրարմէ բամբուկը մեզի համար անհնար բան մը կը դառնայ :

Ասիկա անփոխարինելի բարեբաղդութիւն մը կ'ըլլայ ինձի, որովհետեւ առանց իր ընկերակցութեան, իմ բաղդախնդիր ճամբորդութիւնս, աշխարհի ամէնէն դժուարին բաներէն մէկը պիտի ըլլար, եթէ ոչ անհնարին : Բախպ, հարուստ քաղաք մը, չռայօրէն կը վառնէ ճամբու ամէն ծախք, ամէն քմահա-

ծոյք տեղը տանելով, եւ բան մը պակաս չձգելով, կը բաւէ որ կարենանք երկուքնիս համաձայնիլ, առաջարկութեան մը մասին:

Գիշերը, քաղաքը կոչուած խրճիթի մը մէջ, մեր ղէմքերը հազիւ լուսաւորած մոմի աղօտ լոյսով մը, կը մտածենք յառաջիկայ ծրագիրներուն մասին, որովհետեւ, տարօրինակ անփութութեամբ մը վաղուանին մասին, երկուքս ալ չենք գիտեր, որ մը ետքը ո՛ւր ըլլալնիս:

Մեզի պէս անծանօթ մնացած բաներու մասին միայն հետաքրքիր չըլիկներու, անխելութիւն պիտի ըլլար պարզապէս, մինչեւ այս տեղւանքը գալէ ետքը, Հոթենթացիները չտեսած անցնիլ, Ուստի, որոշում կու տանք Սմերիկա անցնելէ առաջ, այդ նշանաւոր ժողովուրդներու երկիրն ալ այցելել:

Եւ Թրանսպլի վրայ քիչ մը բան սորվելու միտաբանով, կը համոզեմ ընկերս Բրէթորիայէն անցնիլ, առանց մնալու հոն, ցութեկ աչքով պտոյտ մը ընելով միայն: Պօէրներու պէս զիմացկուն ժողովուրդ մըն ալ տեսնելու հաճոյքը, ուրիշ բաղձանք մըն էր, այդ մտադրութեան մէջ, քանի որ պատկերները շատ քիչ բան միայն սորվեցուցած էին մեզի, անոնց արտաքին երեւոյթին մասին:

Կէս օրէ ետք մըն էր, երբ տեղացի առաջնորդ մը, մեզ հետուանց ցոյց տալով հաճութեամբ եւ պօէրակամ բանականութեամբ:

Բարեհամբոյր, աշխոյժ մարդիկներ են Պօէրները, եւ իրենց մանարարիկ աչքերուն մէջ կորովի հաստատակամութեան մը նշոյլը կը ցոյլայ:

Քաղաքարի անապատը կը բաժնէ այս երկիրը Հոթենթացոց երկրէն, ուր մեր ճամբան շարունակելու համար, կը պարտաւորուինք հարաւէն դառնալ:

Երկրին բնական մնացած տեսարանները վայելելու համար, կը նախընտրենք անկոխ ճամբաներէ առաջանալ, վարձելով տեսակ մը կենդանիներ, զորս տեղացիք ձիու տեղ կը գործածեն: Վազրաձիի ցեղէն հեզահամբոյր սիրուն կենդանիներ են ասոնք, որոնք ձիուն կրկին ճամբան կը կտրեն, եթէ թոյլ ձգուի իրենց սանձը:

Օթեւանէ օթեւան իջեւանելով, ամէն գի-

շեր, չեմ յիշեր քանի օրէն, կը հասնինք Հոթենթական սահմանագլուխի գիւղ մը, ուր ձիապանին առաջնորդութեամբ, կ'իջեւանինք ցեղապետին տունը, զոր իրենք կուկու կը կոչեն:

Քաղաքակիրթ մարդոց ջանքերը, բաւական կրթութիւն խոթած են այս մարդոց գլխուն մէջ, եւ անոնք կարծուածին չափ վայրենի չեն:

Քրաւ կոչուած աւաններու մէջ կը բնակին, եւ անուանի քաղաքներ չունին երկրին մէջ:

Իրենց վրանները՝ չիջած կողմնորոշ երեւոյթը ունին, որուն տակը կը մտնեն պզտիկ դռնակէ մը: Ներքնակողմը բաժանումներ չունի, պատերի դէզեր փռուած են գետինը, որոնց վրայ ընտանիքին անդամները, առհասարակ, քով քովի, կը պառկին, նոր-հարսէն մինչեւ խեղճած ծերուկը, որովհետեւ տակաւին «ամօթ»ի գաղափարը մուտ գտած չէ անոնց բարք ու վարքին մէջ, եւ շատերը կիսամերկ են, գիշեր ցորեկ:

Երկու սեռէ տղոց անհամար խումբ մը, մեծ ու պզտիկ, ամէնքն ալ կիսամերկ, կը խաղան, կը մտնեն կ'ելլեն, կը գլտորուին իրարու պլլուած, մէկ խօսքով կը վժան այդ հիւզակներուն տակ, որոնց մեղուի փեթակներու նմանելու համար բան մը չի պակսիր:

Ցեղապետը հրամայեց աղուոր ճաշ մը պատրաստել մեզի, եւ ատոր վրայ, տղայ, աղջիկ, հարս, փեսայ, ամէնքը միացան այդ պատրաստութեան, ո՛րը կրակ վառելու, ո՛րը փայտ ժողվելու:

Իրենց լեզուով հրաման մը ըրաւ ցեղապետը, որուն վրայ նիհարեցէկ, չոր տղայ մը, հաւնոցին դունէն ներս սողսկելով, սագի նմանող թռչուն մը բերաւ վազելէն, ու վիզէն կախած զայն ցոյց տուաւ տան պետին: Կուկու, անոր վրայ աչք մը նետելէ ետքը՝
— Ըա՛հ, ըրաւ կուշտ գոհունակութիւնով մը:

Սագը բերողը, այդ բացառանշնութեան վրայ, դունչը խոշոր մը բանալով, կենդանիին գլուխը բերնին մէջ առածին պէս, սուր ակռաներովը զայն բրցուց նետեց, եւ ուժով բազուկներովը անոր ձիւնին ալ կտտրելով,

նաաւ փետրատել հաւր , տոտիկները երկն-
ցնելով՝ քովը հաւաքուող լոկոտներուն որոնք
իրարու ձեռքէ խլշտելով, սկսան կուշտ կուշտ
կրծել : Խորովեցին հաւը , ու համով ընթրիք
մը ըրինք , ուրկէ սակայն թել մը միս հագիւ
բաժին ինկաւ մեզի :

Ճաշէն ետքը , կուկլուն անկիւն մը ցոյց
ցոյց տուաւ մեզի , ուր տաք կլիմաներու
անհանգիստ քուն մը քնացանք , կճող քըր-
տինքներու մէջ խաշուելով :

Առտուն , այդ նահապետական խումբին
խուժուովը մեր ետեւը ձգած , շաքարեղէգի
դաշտերը ճեղքելով, անհետացանք ամայի բա-
ցատաններուն մէջ :

12 Հոկտ. Եղեգնաւիկ մէջ

Ինծի հետ ընթերցողներուս ալ զարմանք
պատճառեց թերեւս այն դիրքին վազվզուքը
քաղաքէ քաղաք , երկիրէ երկիր , զոր ունե-
ցանք քանի մը օրուան մէջ , պզտիկ յիշա-
տակներ , ճամբու պզտիկ նօթեր միայն տա-
նելով մեզի հետ :

Ես որ , աշխարհի շուրջը պտտելու հա-
մար անդիմադրելի բաղձանքէ մը բռնուած ,
«գրպանս առանց սու մը ունենալու» ճամբայ
կ'իյնայի , բազմին ձգելով ամէն բան , ինչ-
պէս , աստիկ , յաջող կ'երթային մտադրու-
թիւններս , չէի՛ կրնար մեկնել : Ու ասիկա
ինծի շատ կը զարմացնէր , սրտազեղ ուրա-
խութիւն մը պատճառելով , մտադրութիւնս
գործադրելուս , եթէ ձախորդ դէպքեր չի
գային վրդովել երջանկութիւնս , — Նապապէ
մը հովանաւորուած , անոր թելին տակ , աշ-
խարհի շուրջը խաղաղիկ ճամբորդութիւն մը
ընելու չքնաղ երջանկութիւնս :

Բախպա , ընկերս , — ըսի արդէն , — պատ-
ուական տղայ մըն է , վեհանձն , մեծ հոգի
երիտասարդ մը , որուն յարգը գիտնալ պէտք
էր , այն ասեմէն ի վեր , — չըսելու համար
յուրեւ հետեւ , գրաւորի սիրահարներ , որ կը
կարծէք թէ աշխարհարարը չի կրնար անոր
ամէն ձեւերը արտայայտել , — երբ ա՛յնքան
դժուարացած է ազնիւ ընկեր գտնել :

Բայց ճամբու նօթեր միայն պիտի գրէի
կարծեմ , հէ՞ . Ուրեմն . —

Երկուքս ալ , Բախպա ու ես , ճաշակնե-

րով ա՛յնքան յարմարած իրարու , իբր քա-
ղաքակիրթ անկիւններէ խորտոշներ , աւելորդ
շեղում մը պիտի ըլլար մեզի թէպէտ , Բարե-
բուսոյ Գլուխն ալ հանգիստիլ , բայց հարաւա-
յին աշխարհներու է՛ն հեռաւոր ծայրն ալ
տեսած ըլլալու բաղձանքով էր որ , Հօթեն-
թացոյ երկիրը ձգելով , ուղղուեցանք ան
կողմերը , Անկրա Բիքէնա ծոցէն , ուրկէ գեր-
մանական քանի մը ծերացած , խորխուրդե-
նաւներ , տասնըհինգ օրը անգամ մը , փոխն
ի փոխ , կը ճամբորդէն հարաւի ցանցառ նա-
ւահանգիստները , շաքարեղէգի եւ բուրդի
մթերքներով բեռցած :

«Դարօ տի Պօնա Էսթէւանցա՛ն , իրաւցնէ
«Դժբաղդութիւններու Դուրս» մըն է եղեր ,
ինչպէս Պառթլլէմի կոչած է զայն , իր կրած
անառնելի նեղութիւններուն պատճառով ,
որովհետեւ , մինչեւ որ Բարեբուսոյ Գլուխ
ըստածը կը հասնինք , հոգինիս բերանիս
կու գայ :

Այդ գերմանական շոգեշարժներէն մէկը ,
ուր կը մտնենք , շոգեհաւի կատարեալ աւե-
րակ մըն է , իր ամէն բաժանումներովը , կայ-
մէն սկսելով մինչեւ մաշած մեքենաները ,
որոնք ծերացած հողագործի մը բա՛նը կարծր
հողին մէջ խրելու համար ըրած զուր ջանքե-
րուն պէս կը ճգնին , կը թաղլտկին , բռնի
եղեւէջներ գործելով , միօրինակ , յարատեւա-
բար , անխոնջ . խժալուր աղմուկ մը բարձ-
րացնելով իրենց ճիւղճանքներէն , շոգիի
խողովակներէն մինչեւ միսոցը ու կաթսան ,
որոնք կը շարժին , կ'եղեն , կ'իջնեն , կը
ցցուին , խոնջած , ուժաթափ , տկար մե-
քենականութենէ մը լարուած , անոնց ամէնը
իր պաշտօնը կատարելով :

Հարաւի ցատկոտ ու յամառ փոթորիկն ալ
ուրիշ փորձանք մը եղաւ , փորձանք շոգե-
հաւի մը մէջ , փորձանք կլիմայի մը տակ ,
որ խաշուելու տաք մը կը մաղէր մեր գըլ-
խուն , տակաւին անձրեւներու եղանակը հա-
սած չըլլալով , այն երկայն ու անընդհատ
անձրեւները , որոնք ճշմարիտ բարիք մը
կ'ըլլան կանեփի ու հանճարի դաշտատէրե-
րուն :

ՍԴԷԼԼԱ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՐՆՈՅ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Երկուշաբթի առաւօտ ցաւալի տպաւորութեամբ մը համակուեցանք, Կարնոյ մէջ պատահած երկրաշարժին առաջին հեռագիրներն ստանալով: Յնցումը սաստիկ եղած է, մօտակայ աւաններուն ու գիւղաքաղաքներուն մէջ ալ քաւական փնտ պատճառելով: Բայց ամենէն աւելի քաղաքը փնտ կրած է ուր մարդու կորուստներ ալ կան դժարաղբարար: Հայ ազգայնականութեան մէկ մասն ալ, ժողովրդեան ուրիշ մասերուն հետ մէկտեղ, ստիպուել է քաղքէն դուրս ելլել եւ դաշտին մէջ առժամեայ բնակութիւն հաստատել վրաններու տակ, զորս հայթայթած են տեղական իշխանութիւնք: Նահանգին Վսեմ. Կուսակալը, անձամբ այցելել է արկածեալներուն, եւ կառավարական պաշտօնէից միջոցաւ օգնութիւն փութացուցեր է անոնց: Կայսերական հրամանաւ՝ ամէն հոգածութիւն կրնձայուի արկածեալներուն:

Կարնոյ առաջնորդ Տ. Զաւէն Մ. վարդապետ կիրակի իրիկուն հեռագրած էր Ս. Պատրիարքին. — «Երկրաշարժը իր տեսէ՛ երեք օրէ ի վեր: Յորդառատ ձիւն կը տեղայ: Վնասուած են Մայր Եկեղեցին, Ազգ. Վարժարանը եւ Սանասարեան Վարժարանը: Զանազան շէնքերու եղած փնտներուն կարեւորութիւնն ու մանրամասնութիւնները այժմէն չեն կրնար ճշդուիլ ու հաշուարդուիլ: Բոլոր ժողովուրդը վրաններու տակ է: Սաստիկ պէտք կայ օգնութեան»:

Ս. Պատրիարք Հայրը, այս հեռագիրն ստանալուն պէս, փութաց հեռագրով 100 ոսկի զրկել Կարնոյ առաջնորդին: Միեւնոյն ժամանակ, Ն. Ամենապատուութիւնը մասնախումբ մը կազմեց մայրաքաղաքս գտնուող Կարնեցի պատուաւոր ազգայիններէ եւ Կոնգակ մը յանձնեց՝ որպէս զի նպաստ հաւաքեն երկրաշարժէ արկածեալներուն: Մասնախումբի անդամներն են՝ Տիգրան էֆ. Տէր-Ներսէսեան, Դանիէլ էֆ. Հանէսեան, Գարեգին էֆ. Ադամեան եւ Կարապետ էֆ. Խերպէկեան:

Պատրիարքական հրուէրը եւ մասնախումբին ղեկավար տիկնաւորած արդիւնաւորութիւնը ունեցան քանի մը օր-

ուան մէջ, եւ մինչեւ երէկ՝ բարեսէր ազգայիններու կողմէ եղած նուիրատուութեանց գումարը կը հասնէր 500 ոսկիի, որ յաջորդաբար Կարնոյ առաջնորդին զրկուեցաւ Պատրիարքարանի միջոցաւ:

Տարակոյս չունինք որ նպաստները պիտի շարունակուին, արկածեալներուն վիճակը կրկնապէս խղճալի ըլլալով՝ Կարնոյ մէջ ու շրջակայքը տիրող սաստիկ ձմրան ու առատօրէն տեղացող ձիւնին պատճառաւ որոնք դժուար կը դարձնեն վրաններու տակ կամ բացօթեայ բնակութիւնը:

Վերջին լուրերու նայելով, երկրաշարժին փլատակներուն տակէն 25ի չափ դիակներ հանուել են:

ՄԷԿ ԱՄՍՈՒԱՆ ՄԷՋ

Ծաղիկ օրաթերթը իր հինգշաբթի օրուան խմբագրականովը կարճ տեսութիւն մը կընէ մէկ ամսուան միջոցին վրայ զոր բոլորած է, գոհունակութիւն յայտնելով իր գտած համակիր ընդունելութեանը համար եւ յայտարարելով թէ՛ պիտի շարունակէ այն ուղղութեամբ որուն հետեւած է առջի օրէն, հետզհետէ աւելի՝ գեղեցիկ եւ աւելի՝ առողջ հանգամանք մը տալով այս լրագրական ձեռնարկութեանը: Իր առաջադրած նորութիւններէն՝ Ծաղիկ առ այժմ կը յիշէ միայն «Աշխարհի մէջ» յօդուածներուն շարքը պատկերազարդ դարձնելու մտադրութիւնը:

Ծաղիկին վերերեւումը, երկու ծանօթ հրապարակագիրներու խմբագրութեամբ, անկեղծ համակրանքով մը ողջունած էինք արդէն, եւ այդ սիրուն օրաթերթին կարճ միջոցի մը մէջ գտած յաջողութիւնը հաճութեամբ կը դիդենք ու կը շնորհակալուէք այսօր: Պայմանագրական սովորութիւններէ ու տափաւորութիւններէ բոլորովին հեռու, կարճ՝ Զուտ խմբագրականներով, տեսակին մէջ բոլորովին նորութիւն մը եղած «Աշխարհի մէջ»-երով, եւ թարմ ու առատ լուրերով՝ խորհրդածութիւններով համեմատած՝ Ծաղիկ ուշագրաւ դիրք մը գրաւեց, մէկ ամսուան կարճ միջոցին մէջ, Պոլսոյ ազգ. օրաթերթներուն մէջ: Զերմապէս կը խնդակցինք մեր պաշտօնակցին այս յաջողութեանը:

ՄԱՏԼԵՆԻ ՄԵՂՔԸ

Հեղ. Տիգրան Բ. ՔԱՌՕ

Թարգմ. ՏՕՄԻՆՕ

Գ

Ամէն օրուան պէս ժամը երեքին եկաւ Ռօպէտ : Շատ տոգայն էր եւ Լուիզ կատակներ րրաւ տեսնելով անոր «չարարատիկ» դէմքը, ինչպէս ինքը կ'ըսէր : Ես չէի համարձակեր ոչ իրեն նայելու, ոչ ալ հետը խօսելու, վախճալով որ կը տկարանամ : Ռօպէտի վրայ սովորականէն դուրս մտադրազուժմ մը կը գուշակէի իր շրթունքներուն եւ արտեւանունքներուն թեթեւ պրկումներէն դատելով : Ինծի պէս կը սպասէր անշուշտ այն վայրկեանին որ մինակ պիտի մնայինք, բայց առիթը չէր ներկայանար : Հօրեղբայրս դուրս ելած էր : Ի՞նչպէս կրնայինք հեռացնել Լուիզը : Ժամերը կ'երկարէին, տաղտուկ պատճառելով : Մարմող խօսակցութիւն մը, Լուիզի մտադրազ վիճակը զոր կ'ունենար անգիտակցաբար, մեր սիրտկոտրածութիւնը զգալով, իմ յուզմունքներս, բոլոր ասոնք անհանդուրժելի կ'ընէին սպասումը : Թէեւ կամքս չէր տկարանար, բայց ուժս կը կորսնցնէի : Վերջապէս Լուիզ օտքի ելաւ, յոգնած թերեւս երկար օրուան մը տաղտուկէն եւ աչքերս պահ մը միմագնեցան երբ դրան գոցուիլը տեսայ : Լուիզի մեկնելէն վերջ : Մինակ էինք, առանց ուզելու աչքերս վեր առի եւ տեսայ Ռօպէտը, որ ինքն ալ, կը դիտէր զիս անձկագին արտայայտութիւնով մը որ զիս յուզեց :

— Է՛հ . . . խօսեցէ՛ք տեսնեմ . . . Մատչէ՛ն, ըսաւ : Ի՞նչ որոշում տուիք . . . վախու բան մը կա՞յ :

Լուսթիւն պահեցի : Շրթունքներս երկաթէ շղթայով մը կապուած էին կարծես կ'ուզէի պատասխանել իրեն : — չեմ սիրեր ձեզ : — Բայց չէի կրնար այդ բառերը արտասանել : Ուրիշ բառ մը կը մտնէի եւ չէր գար միտքս : Խոր լուսթիւն մը կը տիրէր մեր մէջ : Ժամանակը կ'անցնէր եւ Լուիզ կրնար վերադառնալ :

— Մատչէ՛ն, գոչեց նորէն, ըսելիք բան մը չունի՞ք ինծի :

— Ի՞նչ կ'ուզէք որ ըսեմ, յարեցի՝ ջանալով ժպտիլ : Այն սէրը որուն վրայ խօսեցաք ինծի երէկ, նոր է դեռ, փառք Աստուծոյ, եւ անկարելի չէ հրաժարիլ անկէ . . . մոռնանք զայն :

— Մոռնա՛լ, բայց կրնա՞մ միթէ . . . գոչեց անկեղծ վշտի շեշտով մը : Ի՞նչ ըսել կ'ուզէք, ա՞յդ է ձեր վճիռը, ո եւ է յոյս մը չէ՞ք տար ինծի . . .

Կեցաւ, բայց տեսնելով որ լուռ կը մնամ :

— Ուրեմն իրա՞ւ է որ չէք սիրեր զիս . . . ա՛հ, եթէ գիտնայիք թէ որքա՛ն կը ցաւցընէք սիրտս . . . Լուիզն է արդեօք մեզ իրարմէ բաժնողը : Թողէ՛ք որ անգամ մը փորձեմ, կրնայ ըլլալ որ իմ խոստումներէս հրաժարէր . . . այն ատեն կը հաւանի՞ք որ . . .

— Ձէ՛, չէ՛ . . . Լուիզ չէ՛ կարող եղածը փոխել . . . :

— Ուրեմն կ'ստէ՛ք զիս . . . միմեջեց . . . Ի՞նչ ըրի ձեզի . . . :

— Շատ ուշ մնացիք . . . պատասխանեցի զլուսկ անդին դարձնելով :

— Շատ ո՛ւշ . . . :

— Պէտք է որ ճշմարտութիւնը ըսեմ ձեզի, աւելցուցի ջանք մ'ընելով : Ամէն բան լմնցընելու է, գիտցէք որ այս սիրտս որուն այնքան կարեւորութիւն կուտաք, ուրիշի տուած եմ արդէն . . . :

Չգիտեմ ինչպէ՛ս կրցեր էի ըսել այս սուտը : Իրաւ է թէ միտքս զրած էի ամէն յոյս կտրել Ռօպէտի համար, բայց բան մը երեւակայած, բան մը որոշած չէի նախապէս : Վայրկեանական ներշնչում մըն էր ունեցածս եւ արդիւնքը սպասածէս աւելի մեծ եղաւ :

— Անկարելի՛ է . . . ըսաւ, անկարելի՛ է . . .

ի՞նչպէս ձեր այնքան անբիծ եւ խորունկ աչքերը կրցան այդ ատարձան խարեւ զիս եւ ձեր գաղտնիքը պահել այնքան ատեն . . . ի՞նչպէս բան մը չիմացայ , ի՞նչպէս չի կասկածեցայ :

— Ո՛չ ոք գիտէ զայն . . . պատասխանեցի փութով , այնքան էր փափաքէի վերջ տալ բերնով թէ սրտով ստեղծ պէտքին . . . Ռօպէ՛ն , ձեր պատիւին վստահելով կ'ընեմ այս խոտովանութիւնը . . . :

Գլուխը ծռեց առանց պատասխանելու . . . երկար տառն լուռ մնացինք . յետոյ . . .

— Ըսե՛լ է որ , յարեց , ամէն բան վերջացած է . . . մնաւ բարով , անուշիկ երազս . . .

Մէկ քանի քայլ յառաջացաւ դէպի դուռը , բայց յանկարծ ետ դառնալով .

— Պիտի ճանչնամ , գոչեց , պիտի հասկընտմ թէ ո՞վ է ինձմէ նախամեծար սեպած անձերնիդ . . . :

— Եւ երբ որ հասկնաք , ըսի հանդարտօրէն , պիտի յիշէք կարծեմ թէ գաղտնիքս իմացնելով՝ ձեզի իրաւունք տուած չեղայ անխորհրդապահ ըլլալու :

Աթոռի մը վրայ ձգեց ինքզինքը :

— Մեկնիմ պիտի , ըսաւ , ինձմէ վախնալու պատճառ մը չունիք . . . :

— Ինչո՞ւ մեկնիլ . . . ի՞նչ բան պիտի վնասէք մենէ հեռու , ընտանիք մը չունի՞ք հոս , փափկասիրտ ու պաշտելի կին մը , ձեր երազածէն աւելի աղէկ ու կատարեալ . . . եւ քոյր մըն ալ ունիք , Ռօպէ՛ն , ըսի ձեռքս երկնցնելով իրեն , հաւատարիմ բարեկամուհի մը , հաւատացէ՛ք . . . թողէք որ սիրեն ձեզ , մի՛ մեկնիք . . . :

— Ձեր երջանկութեան հանդիսատես ըլլալու համար , այնպէս չէ՞ . . . :

— Օ՛հ , գոչեցի անխոհեմարար . . . Աստուած ալ գիտէ որ իմ երջանկութեանս տեսարանը երբեք չի պիտի վշտացնէ ձեզ . . . :

— Կարելի՞ բան է . . . ըսել է առանց յոյսի կը սիրէք . . . ուրեմն կը մնամ հոս . . . ո՞վ գիտէ թէ սպազային . . .

— Ձէ՛ . . . բան մը մի՛ յուսաք , Ռօպէ՛ն . . . որովհետեւ ինձի համար աւելի երջանկութիւն կայ լսի սպասելուն մէջ , որքան չի կայ աշխարհիս բոլոր միւս երջանկութիւններուն մէջ . . . :

— Հե՛րիք է , հե՛րիք . . . գոչեց խեղդուկ ձայնով մը . ա՛յդքան անգթութիւն չուզեր ալ :

Եւ դուրս ելաւ :

Հետեւեալ օրը Ռօպէն չերեցաւ : Ծառ լախնական երկտողով մը ուր Լուիզի անունը պաղ կերպով մէջ բերուած էր , կը գրէր թէ հիւանդ է : Հօրեղբայրս հիւանդոտեսի գնաց մեր տանը բժիշկին հետ . զինքը անկողնէն ելած գտան , բայց քիչ մը տենդ ունէր : Այս անհագասութիւնը , ճշմարիտ ըլլար թէ կեղծ , բաւական երկար տեւեց : Հօրեղբայրս ամէն օր կ'այցելէր իրեն , մինչդեռ Ռօպէն քիչ անգամ տեղեկութիւն կ'ուզէր մեր վրայ եւ մեզ վերատին տեսնելու խօսքը չէր ընել : Այն ատեն Լուիզ սկսաւ մտատանջ ըլլալ : Այնքան իրարանցումէ վերջ , Ռօպէնի բռնած ընթացքը անբացատրելի կը մնար , որքան ինձի , նոյնքան ալ ուրիշներուն համար : Հօրեղբայրս ալ սկսաւ հոգ ընել եւ կը վախճայի որ առտուան մէկը , չի գար բացատրութիւն ու գելու : Ի՞նչ էր Ռօպէնի նպատակը , անշուշտ իր քաջուած ըլլալը նախազգացնել : Այս գաղափարը որ ճշմարտանման ըլլալ կը թուէր , կը տանջէր զիս : Այս սիրտհատնումին մէջ որոշեցի զրեւ իրեն : Իմ մտադրութիւններուն եւ անձնութեանս վրայ վստահ , առանց վարանելու , սովորական ձեւակերպութիւններէն չեղելով . — «Վերադարձէ՛ք , գրեցի իրեն , Լուիզ կը սիրէ ձեզ եւ ձեր բացակայութիւնը պիտի մեռցնէ զինքը : Առանց հոգ ընելու որ կրնայ տառապիլ , Լուիզի ներշնչեցիք անմիջիժարելի սէր մը որ կ'աճի , կ'արմատանայ եւ հիմա իրաւունք չունիք փախչելու՝ իր մանկամարդ սրտին անդորրութիւնը մէկտեղ տանելով . — » Եւ այսպէս շարունակեցի , առանց կարգ կանոնի գրելով ինչ որ Լուիզի համար ունեցած խորունկ գորովս կրնար ներշնչել ինձի : Այս նոր , անձանթ հրայրքը եւ ետանդը զորս երակներուն մէջ կը զգայի սիրուած օրէս ի վեր , դուրս կուտայի ամբողջապէս Լուիզի անունով եւ Լուիզի համար . — «Ի՞նչ կը սպասէք սպազային , կ'ըսէի դեռ . ի՞նչ փնտռելու պիտի երթաք հեռուները , երջանկութիւնը ձեր մօտն է , կը ժպտի եւ ձեռք կ'երկնցնէ ձեզի : Ձեր հօր

երազած երջանկութիւնն է այս զոր ձեր ուզածէն աւելի գեղեցիկ ու քաղցր գտաւք հոս եւ կ'արհամարհէք զայն հիմա, ցնորքի մը համար, որովհետեւ ձեր կարծածին չափ չեմ ես, իմ մէջն նոր ու սիրելու անիրոճ հոգի մը ուզեցիք տեսնել, բայց ես կը ճանչնամ անոր անուշութիւններն ու դառնութիւնները: Ի՞նչ բան սիրեցիք ուրեմն դուք եւ ի՞նչ բանի պիտի յատկացնէք ձեր կեանքը: Ա՛հ, Ռօպէն, երջանիկ չի պիտի ըլլաք դուք եւ անմեղ աղջիկ մը մեռցուցած պիտի ըլլաք: Ի՞նչպէս չի մտածեցիք անխոհեմաբար թէ աւերկա առանց սիրելու չի պիտի կրնար տեսնել ձեզ ամէն օր»:

Ուրիշ մէկ քանի նամակներ ալ գրեցի որոնք անպատասխան մնացին: Այդ նամակները կը ստիպուէի ակամայ վստահիլ տան ծառաներուն, իրենց հասցէին տրուելու համար, որովհետեւ մինակ դուրս ելնելու սովորութիւն չունէի եւ Լուիզ գրեթէ չէր գտնուեր բնաւ ինձմէ: Միւս կողմէ, սպասելու ալ ատենը չէր եւ առանց վախի ու տհաճութեան չէ որ որոշեցի նպատակս հասկնել ծառաներուն: Անկարելի էր որ նշմարած չըլլային Ռօպէնի երկար բացակայութեան միջոցին իմ զրկած գաղտնի նամակներս որոնք կրնային տեղի տալ չարամիտ կասկածներու: Ժիւսթէնի մէկ համարձակ ու չարաճճի նայուածքը, զոր տեսայ վերջին երկուօրս Ռօպէնի զրկած միջոցին, համոզեց զիս թէ պարապ տեղը չեր՝ ըրած գգուշութիւնս եւ սակայն չի գլղացի ըրածիս վրայ, քանի որ վրտահ էի թէ վարմուքս ուղղամիտ էր:

Զիս ամենէն աւելի տառապեցնող բան մը եթէ կար, ան ալ Ռօպէնի պահած տարօրինակ լուծիւնն էր եւ Լուիզին ալ հետզհետէ մեծցող տխրութիւնը: Միշտ սպասելու վրայ էր խեղճը. է՛ն պզտիկ ոտքի ձայնը դող կը հանէր զինքը եւ ամէն անգամ որ սալօնին դուռը կը բացուէր, կառ կարմիր կըլլար դեմքը: Ինչ ընելս, իր հարցումներուն ինչպէ՛ս պատասխան տալ չէի գիտեր, երբոր կը նայէր ինծի անձկանօք, իբր թէ գոչակած ըլլար թէ միայն ես գիտէի զինքը տառապեցնող գաղտնիքը:

Հօրեղբայրս ալ հետզհետէ մտազբաղ կը

դառնար. մէկ քանի օրէ ի վեր չէր գացած տեսնելու Ռօպէնը. անոր անունն ալ տալու կը քաշուէր: Կացութիւնը անտաննիկ էր եւ կը զգայի թէ չէր կրնար տեսնել այդպէս: Ի՞նչ ընելու էր. վհատած էի եւ անկարող Լուիզը փրկելու: Սակայն չէի մտածեր ալ որ անոր երջանկութեան բեկորներուն վրայ հիմնէի իմ երջանկութիւնս. կը զգայի թէ մեր սրտակից ուրախութիւններուն չէնք կը փչէր, բայց ձեռքէս բան մը չէր գար ընել եւ ինքզինքս քաջութեամբ կը նետէի անոր փլատակներուն տակ:

Իրիկուն մը, երեքնիս ալ սալօնն էինք. Լուիզ լուռուած ու տկար, թիկնաթոփ մը վրայ երկնցած էր, աչքերը գոց: Այսպէս թեւեւ կ'ուզէր քունի մէջ անցընել ժամանակին երկարութիւնը. գուցէ ալ, քնանալ ձեւացնելով, կը յուսար ազատ ըլլալ մեզի հետ հազարդակցութիւն ունենալէ: Հօրեղբայրս կը կարդար, իսկ ես կ'ստեղծագործէի մտածելով: Խորունկ լուծիւն մը կը տիրէր մեր շուրջը, երբ ժամը տասնին մօտ դուռը բացուեցաւ եւ Ռօպէն ներս մտաւ: Զի կրցայ զարմացումի ճիշ մը զսպել, իսկ Լուիզ ոտքի ելաւ այնքան սաստիկ յուզումով մը որ վախցուց զիս: Զի կայ բառ մը որ կասեցնէր բացատրել անոր դէմքին վրայ ցոլացող ուրախութիւնը:

Ռօպէն փոխուած չերեցաւ ինծի, իր սովորական եւ բնական զուարթ ձեւովը խօսակցեցաւ եւ Լուիզի ըրած թեթեւ յանդիմանութիւններուն պատասխանեցով. — «Հիւանդ էի, ըստ պարզութեամբ, կը տառապէի, սիրելի Լուիզ, բայց ամէն բան լինցած է. չի պիտի թողում ալ քեզ» — Եւ ժպտելով, համբուրեց անոր մատուցներուն ծայրը:

Հօրեղբորս ընդունելութիւնը շատ պաղ եղաւ նախապէս. բայց չի կրցաւ պահել իր քէնը, իր զաւակին ուրախութիւնը տեսնելով: Խեղճ, անուշիկ Լուիզ... մեծ էր իր սէրը, եւ չէր գիտեր կեղծել, ոչ իսկ միտքէն կանցնէր. Ռօպէնի վերագործը ամէն բան մոռցնել տուաւ եւ ինքզինքը ցուցուց առաջուան պէս զուարթ ու բարի: Զիրենք մէկտեղ տեսնողը, պիտի ըսէր որ նախորդ իրիկունը միայն զատուած էին իրարմէ եւ չի պիտի կասկա-

ծէր թէ տարօրինակ բան մը անցած ըլլար մէջերնին : Գիշերը ընտանեաւոր անցուցինք այսպէս , առաջուաններուն ճիշտ նման , բայց աւելի մօտէն զգալով երջանկութիւնը զոր կարծած էինք կորսնցուցած ըլլալ :

Այդ օրունէն ի վեր , Ռօպէն սովորակա- կանին պէս գալ սկսաւ : Ամէն բան իր կա- նոնաւոր ընթացքը առած էր եւ անցած տխուր օրերը չեղածի պէս սեպուեցան : Ինծի կը թուէր թէ Ռօպէն աւելի ուրախ էր , աւելի դիւրահաղորդ քան թէ առաջ : Ես կ'ուսում- նասիրէի զինքը , չգիտնալով թէ պէ՞տք էր գո՞ր ըլլալ թէ ո՞չ վարձնալ իր այդ վիճակէն :

— Իրաւունք ունէիք , ըսաւ ինծի առա- ջին անգամ որ մինակ մնացինք : Յնորք մը հալածեցի , բայց ամէն բան անցած , բոլո- րովին վերջացած է , կ'երգնում ձեզի : Օրին մէկը մտածեցի փախչիլ , բայց մեկնելու ա- տենա յիշեցի թէ ձեռնէ զատ ուրիշ մէկը չու- նէի զիս վար գնող այս տեղ : Իմ կեանքս այսուհետեւ կապուած է Լուիզի կեանքին , ձերինին ու հոս ճանչցած բոլոր անձերուս հետ զորս ուրիշ տեղ չի պիտի գտնեմ այլեւս : Ձեր նամակները ձեռքս հասան եւ կ'օրհնեմ զանոնք : Աչքերս բանալ տուին ինծի : Այո՛ , պիտի սիրեմ Լուիզը եւ կը սիրեմ արդէն զին- քը : Անմիտ ու մեղապարտ մը եղած չպիտի՞ ըլլամ փախչելով այդ պաշտելի արարածէն , այդ անրիժ հոգիէն ուր աչքս կրնայ թա- փանցել առանց վարձնալու որ օտար ստուերի մը հանդիպի հոն : Ծնորհակալ եմ , Մատէն , որ ճամբայ բացիք ինծի , վեհանձնաբար ա- մէն բան իմացուցիք ինծի , առանց կեղծիքի : Ազնիւ սիրտ մը ունիք եւ դուք ալ ինձմով պիտի ունենաք խոնարհ եւ անձնուէր եղ- բայր մը :

Վերջին բառերը չեչուեց ձայնը զօրացնե- րով , իրը թէ ապագային մէջ զիս ապահով- ցընելու եւ անցեալը ջնջելու համար :

— Կը հաւատա՞մ ըսածնուդ , պատասխա- նեցի ձեռքս իրեն երկնցնելով :

Նոյն իրիկունը իսկ , Ռօպէն ամուսնու- թեան ուզեց Լուիզը :

Վերջ անցած օրերուն վրայ : Օժիտի պատ- րաստութիւնները , հարսանեկան կողովին ընտրութիւնը զորս բոլորն ալ յանձն առեր էի ընել , պատճառ կ'ըլլային ինծի որ չարտնա- կարար եւ առանց ձեւակերպութեան՝ բացա- կայ ըլլամ տունէն եւ յաճախ մինակ թողում երկու նշանածները , Ես իսկ կը նախագահէի իրենց սենեակներուն տեղաւորմանը եւ ամէն բանի վրայ կը հսկէի մօր մը փութկոտու- թեամբ : Ծնորհիւ հօրեղբորս առատաձեռ- նութեան , իրենց համար պատրաստեցի վա- յելուչ ու չքեղ բոյն մը սրուն չափ գեղեցիկ բան մը չէի կարծեր որ գտնուէր , թէ՛ ձեւի թէ՛ գոյներու ճաշակի կողմէ :

Մէկէ աւելի անգամներ , սակայն , գոր- ծաւորներուն իմ շուրջս աշխատած միջոցին , զգացի որ աչքերս կը լեցուէին յանկարծ ար- ցունքով : Նոյնպէս , մէկ քանի անգամներ , աշխատելէն յոգնած , երբ կ'երթայի հանգչիլ պահ մը Լուիզի եւ Ռօպէնի քով , սրտի զօ- րաւոր նեղութիւն մը կը զգայի տեսնելով զանոնք գլխի գլխի տուած եւ ցած ձայնով խօսակցելով : Թէեւ Ռօպէն Լուիզի շէր ցու- ցըներ մեծ սէր մը զոր շէր զգար դեռ ան- լուշտ , բայց ունէր հոգածու եւ անկեղծ գուրգուրանք մը որով Լուիզ երջանիկ կ'ը- լար՝ իր անմեղութեամբը հասկցած չըլլալով թէ սէրը տարբեր նայուածքներ եւ տարբեր լեզու մը կրնար ունեցած ըլլալ : Ինծի գալով , բոլոր ջանքերս կը հաւաքէի դէմ տա- լու համար կրկին անգամ ունենալիք տկա- րացումներուս որոնց վերադարձը կը նախա- զգայի : Իմ եւ Ռօպէնի միջեւ , ամէն բան մոռցուած էր եւ մեր յարաբերութիւնները եղան ինչ կերպով որ պէտք էր ըլլային , պարզ եւ գործաւոր :

(Շարունակելի)


ՏՈՒՅԹ. Ե. ՄԱՍԻՍ (Բերա , Թագսիմ փո- ղոց) իր բնակութիւնը փոխադրած է նոյն փողոցի 15 թիւ տունը ուր՝ ըստ առաջնոյն՝ հիւանդ կ'ընդունի ամէն օր , կես օրէ վերջ :

Արսունսէր Կ. Ս. Իիթի-ճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՍԵԱՆ

Կ. Պոլիս , Ֆինանսերու եօդուղու , Թիւ 27

Ձի պիտի ծանրանամ այդ վայրկեանէն



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր Ի

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարեւագործութեամբ, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ու ոտքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ԲԵՐԱ, Մեծ Կողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց.

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաւսաւորութիւն.

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄ
ՇԱՐՈՒՄ



ՌՕՍԻԱ — ROSSIA



Ա. Պ. Ս. Ն. Վ. Ս. Գ. Ր. Ա. Կ. Ա. Ն. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ

34,775,642 Ֆրանք

նրաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մասնաճիւղն հին տեղը

Ընդհ. Բնէի

Ընդհ. Գործակալ

Ա. ՀԻՒՐՄԻՒՉ

ԹԵՈՅՈՐ ՌԷՐԲԷՆ

1902

Պարզ կազմ 3 Ղր.

ԹՈՒՐԻԲԵՐԷՆ, ՀԱՅԵՐԷՆ, ՅՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ՅՈՒՆԱՐԷՆ ԼԵԶՈՒԱԻ

ՕՐԱՑՈՅՑ-ՅՈՒՇԱՏԵՏՐ

(AGENDA INTERNATIONAL)

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Չ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, Պաշտպան Հատուկ, Կ. Պոլիս
Կը գտնուի Պոլսոյ եւ Գաւառաց բոլոր Գրականաւորներու
եւ Թղթականաւորներու բով

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԳՆՈՂՆԵՐՈՒ ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ԶԵՂՉ

Ոսկեգոծ փառակազմ 8 Ղր.

Ընտր լաթակազմ. 5 Ղր.

ԻՒՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊՍԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ շահաք	240,000,000 Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ շահաք	99,000,000 Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրողք ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des b6néfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թահապուրուն խան, Սամ. Պանֆային դիմացը

Դրժակաւորիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ